

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ 2018 ԹՎԱԿԱՆ N - Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 19-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ քաղաքի Ս.Թեիլերյան փողոցի թիվ 43/6 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասերից 0,00301 հեկտար մակերեսով (անշարժ գույքի իրավունքի գրանցման վկայական՝ N 28092017-11-0031, 28.09.2017 թ.) ու 24381 դրամ կադաստրային արժեքով հողամասն ընդունել որպես նվիրաբերություն Հայաստանի Հանրապետությանը և այն ամրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ «Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի ղեկավարի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագիր,

2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նվիրաբերության պայմանագրի նոտարական վավերացման, գույքի հանձնման-ընդունման և գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքներն՝ այն իրականացնելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բերդի արհեստագործական

պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին,

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում «Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության և հողատարածքի բարելավման անհրաժեշտությունից:

«Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում /այսուհետև՝ կազմակերպություն/ 2015 թվականին իրականացվել են շինարարական աշխատանքներ, ինչի արդյունքում փոխվել են շենքի և տարածքի չափերը: Ընդհանուր անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման նպատակով կատարվել է չափագրում, որի արդյունքում պարզվել է, որ կապիտալ շինարարության ընթացքում շենքը սպասարկող 0.00301 հա մակերեսով հողամասը պատկանում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքին: Վերջինիս կողմից ընդունվել է որոշում՝ սահմանված կարգով հասարակական կառուցապատման հողամասերից նշված 0.00301 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

Նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի կարգավորել «Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության շենք-շինությունների և դրանք սպասարկող հողամասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու գործընթացը, ինչպես նաև կնքել հողամասի անհատույց օգտագործման պայմանագիր և իրականացնել դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին:

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն կամ բացակայություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՍ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 22.02.2018թ. հ.01/15.2/1037-18</p>	<p>1. Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետից հանել «քաղաքային» բառը</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 26.02.2018թ. հ.01/9-5/3325-18</p>	<p>2. Նախագծի վերնագիրը լրացնել «և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու» բառերով</p>	<p>Ընդունվել է մասնակիորեն</p>	<p>Նախագծի վերնագիրը լրացվել է «և ամրացնելու» բառերով</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 21.02.2018թ. հ.01/22.31/1246-18</p>	<p>3. Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նախատեսել, որ հողամասի նվիրաբերության պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը նույնպես իրականացվելու են «Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է համապատասխան լրացումը</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 20.02.2018թ. ՄՍ/1063-18</p>	<p>1.«Բերդի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացված և շինություններով ծանրաբեռնված 0.1 հա ընդհանուր մակերեսով հողամասը նույնպես հանդիսանում է համայնքային սեփականություն, որը Հայաստանի Հանրապետությանը տրամադրված է անհատույց օգտագործման իրավունքով (հիմք՝ 14.03.2007թ. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական</p>	<p>Չի ընդունվել «Բերդի րհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացված և շինություններով ծանրա-</p>	<p>Թողնվել է անփոփոխ</p>

	գրանցման N1985078 վկայական) – առաջարկվում է ներառել որոշման նախագծում:	բեռնված 0.1 հա ընդհանուր մակերեսով հողամասը հանդիսանում է ՀՀ սեփականություն, (հիմք՝26.12.2011թ. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N2852574 վկայական)	
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 14.03.2018թ. հ.01/19.2/4443-18</p>	<p>1. Առաջարկվում է նախագծի 1-ին կետում «որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականություն» բառերը փոխարինել «ընդունել որպես նվիրաբերություն Հայաստանի Հանրապետությանը»:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Լրամշակվել է</p>